

ԱՐՁՆՈՒ ՏՈՀՄԱՅԻՆ ԹՏԽ ԲԲԸ

Արզնի տոհմային ԹՏԽ-ի Տեխնիկական և տեխնոլոգիական
վերազինման

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021 Երևան

Ձեռնարկող. ԱՐԶՆՈՒ ՏՈՀՄԱՅԻՆ ԹՏԻՒ ԲԲԸ

Գրանցման համար՝ 42.120.00323, 06/04/1995

Գտնվելու վայրը՝ Կոտայքի մարզ, գ. Արզնի, Արզնի-Աբովյան խճ 5/2

ԱՐԶՆՈՒ ՏՈՀՄԱՅԻՆ ԹՏԻՒ ԲԲԸ-ի


Տնօրեն՝ Գեղամ Ջանվելյան

Բնապահպանական փորձագետ՝ Արայիկ Ծատուրյան

TSATURYAN CONSULTING

Sustainable Development

 +374 94 800 877

 tsaturyan.consulting@gmail.com

 @EHSCONSULTANTARMENIA

	Հապավումների ցանկ
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՇՄՆ	Շրջակա միջավայրի նախարարություն
ՄՆ	Մշակույթի նախարարություն
ԱՆ	Առողջապահության նախարարություն
ԱՊՄ	Անհատական պաշտպանության միջոցներ
ԲԼՏՄ	Բնապահպանական և ընդերքի տեսչական մարմին
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ԹԿՊ	Թափոնների կառավարման պլան
ՇՄՄՍԿ	Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպությունը
ԲՀՊՏ	Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Բովանդակություն

Բովանդակություն.....	4
Սահմանումներ.....	5
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	7
Նախաբան.....	7
Նախատեսվող գործունեության նպատակը	8
Նախատեսվող գործունեության բնութագիրը.....	10
Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նորմատիվաիրավական դաշտը.....	16
2. Շրջակա միջավայրի և Սոցիալական նկարագիրը.....	22
Գտնվելու վայրը.....	22
Շրջակա միջավայրի նկարագիրը	26
Կլիմա.....	28
Սեյսմիկ բնութագիր.....	31
Հողաբուսական ծածկույթ	33
Ջրային ռեսուրսներ	36
Մթնոլորտային օդ	39
Աղմուկ.....	42
Կենսաբազմազանություն	42
Բուսական աշխարհ.....	43
Կենդանական աշխարհ.....	44
Բնության հատուկ պահպանվող տարածքներ.....	44
Պատմամշակույթային բնութագիր	46
Սոցիալական Տնտեսական բնութագիր	49
Արդյունաբերություն.....	52
Գյուղատնտեսություն.....	53
3. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության վերլուծություն	54
4. Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատում	58
5. ՇՄ-ի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը.....	61
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ և ՀՂՈՒՄՆԵՐ	66

Սահմանումներ

Շրջակա միջավայր` բնական և մարդածին տարրերի (մթնոլորտային օդ, ջրեր, հողեր, ընդերք, լանդշաֆտ, կենդանական ու բուսական աշխարհ, ներառյալ` անտառ, բնության հատուկ պահպանվող տարածքներ, բնակավայրերի կանաչ տարածքներ, կառույցներ, պատմության և մշակույթի հուշարձաններ) և սոցիալական միջավայրի (մարդու առողջության և անվտանգության), գործունեների, նյութերի, երևույթների ու գործընթացների ամբողջությունը և դրանց փոխազդեցությունը միմյանց ու մարդկանց միջև.

Շրջակա միջավայրի վրա ազդեցություն` հիմնադրությամբ փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա հնարավոր փոփոխությունները.

Նախատեսվող գործունեություն` շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում.

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության նախնական փուլ` հիմնադրությամբ փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հայտի ուսումնասիրության և վերլուծության իրականացման արդյունքում համապատասխան որոշման կայացման գործընթաց.

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության հիմնական փուլ` հիմնադրությամբ փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության ուսումնասիրության և վերլուծության արդյունքում դրանց թույլատրելիության վերաբերյալ պետական փորձաքննական եզրակացություն տալու գործընթաց.

Բույսերի Կարմիր գիրք` միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման

եզրին գտնվող բույսերի և համակեցությունների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների, ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին

Կենդանիների Կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ է, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող կենդանիների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին

Ազդակիր համայնք՝ շրջակա միջավայրի վրա հիմնադրությամբ փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք.

Բնության հատուկ պահպանվող տարածքները մակերեսային ու ստորերկրյա ջրերի, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի՝ օրենքով սահմանված կարգով առանձնացված այն տեղամասերն են, ինչպես նաև առանձին բնական օբյեկտները, որոնք հատուկ էկոլոգիական, գիտական, բուժական, մշակութային, գեղագիտական արժեք են ներկայացնում և լրիվ կամ մասամբ, ժամանակավորապես կամ մշտապես ենթակա չեն տնտեսական շահագործման:

Մշակութային ժառանգություն են համարվում հուշարձանները՝ ճարտարապետական, մոնումենտալ քանդակագործության և գեղանկարչության ստեղծագործությունները, հնագիտական բնույթի տարրերը կամ կառուցվածքները, արձանագրությունները, անձավային կացարանները և տարրերի համադրումները, որոնք ունեն պատմության, արվեստի կամ գիտության տեսանկյունից բացառիկ համընդգրկուն արժեք:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախաբան

ԱՐԶՆՈՒ ՏՈՀՄԱՅԻՆ ԹՏԽ ԲԲԸ զբաղվում է տոհմային թռչնաբուծությամբ և տավարաբուծությամբ: Մասնագիտացել է ձվի արտադրության մեջ: Ընկերությունը հանդիսանում է հանրապետության խոշոր ձու արտադրողներից: Մննդային ձվերը հիմնականում ստանում են հավերի ձվատու ցեղատեսակներից: Ընկերությունը տեղակայված է Կոտայքի մարզի Արզնի համայնքի տարածքում գ.Արզնի, Արզնի-Աբովյան խճուղի 5/2 հասցեում:

Ընկերությունը գործունեությունը իրականացնում է սեփականության իրավունքով իրեն պատկանող 17.05453 հա տարածքի վրա:

Ֆերմայի գործունեությունը սկիզբ է առնում դեռևս ԽՍՀՄ-ի ժամանակ, որպես Արզնի Սովխոզ, ստեղծվել է անցյալ դարի 60-ականներին: Անկախության տարիներին տնտեսությունը գրեթե դադարել է գործել: 1995թ ֆերման ձեռք է բերել գործարար Մարատ Ջանվեյանը և անմիջապես իրականացվել է արտադրական հզորությունների վերականգնում: Ընկերությունը՝ «Արզնի տոհմային ԹՏԽ» ԲԲԸ Հայաստանի անկախության տարիներին առաջիններից էր, որ սկսեց զարգացնել տեղական արտադրությունը և շուկայում վերականգնեց տեղական արտադրանքի ներկայությունը:

Ընկերությունը նախկինում զբաղվել է նաև խոզաբուծությամբ, սակայն 2020թ-ից դադարեցրել է այս գործունեությունը:

Նախատեսվող գործունեության նպատակը

ԱՐԶՆՈՒ ՏՈՀՄԱՅԻՆ ԹՏԻՒ ԲԲԸ պլանավորում է իրականացնել տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, տեղադրելով հավերի բուծման և ձվի ստացման Hellmann Poultry GmbH & Co ընկերության վանդակային սարքավորումները հոսքագիծ: Այս ընկերության հոսքագիծը համարվում է լավագույներից մեկը աշխարհում և ապահովում է Եվրոպական Միության տեխնիկական ստանդարտների և նորմաների պահանջները: Ընկերության հոսքագիծերը բարեհաջող ներդրված են արևմտան Եվրոպայում 1968թ-ից, արևելյան Եվրոպայում 1996թ-ից, Հյուսիսային Ամերիկայում 2002թ-ից:

Այս տիպի վանդակային սարքավորումները առանձնանում են մի քանի հիմնական առանձնահատկություններով

- Թռչունների կեցության համար սարքավորումների հարմար ձևավորմամբ
- Թռչունների պահման ավտոմատ կառավարման համակարգով
- Ավտոմատ համակարգով փակվող/բացվող վանդակներ՝ շարժական փեղկերով
- Թռչունների սննդի և ջրի ավտոմատ մատակարարման համակարգեր
- Ֆերմայում ջերմային ռեժիմի ավտոմատ կառավարում
- Ֆերմայում խոնավության ավտոմատ կառավարում
- Չվի հավաքման վերելակային համակարգ
- Թռչնաղբի հավաքման և հեռացման ավտոմատ համակարգ

Այս տեխնիկական և տեխնոլոգիական վերազինման արդյունքում ընկերությունը ստանալու է

Կերային բազայի կորուստների կրճատում

Էլեկտրոէներգիայի ծախսի զգալի կրճատում

Չվի խոտանման տոկոսի նվազում

Ֆերմայի աշխատակիցների ձեռքի աշխատանքի կտրուկ նվազեցում

թռչնանոցներում:

Չվի արտադրության գործընթացը ընդգրկում է հետևյալ հիմնական փուլերը:



- ճտի ձեռքբերում



- ճտի աճեցում մինչև վառել



- Ածան հավերի աճեցում



- Ձվի ստացում



- Ձվի տեսակավորում




- Ձվի փաթեթավորում



- Ձվի առաքում վաճառքի

Նախատեսվող գործունեության բնութագիրը

Թռչնանոցը, որում իրականացվելու է տեխնիկական և տեխնոլոգիական վերազինման ծրագիրը, ունի 96 մ երկարություն և 18մ լայնություն:




Նակար1: թռչնանոցի դիմային կտրվածք

Նոր վանդակային սարքավորումների հոսքագիծ որոնք նախատեսված են, արտադրական թռչնաբուծության նպատակով, ձվատու հավերի պահման համար բազմահարկ են, ունեն 4 կամ 5 հարկերից կազմված մարտկոցներ:


Թռչնանոցում նախատեսվում է տեղադրել 2 շարք 5 հարկանի և 4 շարք 4 հարկանի վանդակային թռչնանոցներ:

Յուրաքանչյուր շարք կազմված է սեկցիաներից որոնք ունեն 1.205մ երկարություն:


Սեկցիաները բաժանված են վանդակների որոնք ունեն 59 սմ խորություն և 60 սմ երկարություն, ընդհանուր 3.540մ² մակերեսով: Վանդակները նախատեսված են 8 գլուխ թռչունի համար: Յուրաքանչյուր թռչունի հաշվարկով ստացվում է 443 սմ² մակերես իսկ կերի հասանելիության ճակատը կազմում է 7.5սմ:



Նկար 2; վանդակային հոսքագծի մարտկոցները



Նկար 3; վանդակային հոսքագծի սեկցիաները



1. Ձվի հավաքման վերելակ
2. Թռչնաղբի չորացման խողովակ
3. Խմելու ջրի համակարգ
4. Կերի մատակարարման շղթայի շարժիչային միավոր
5. Կերի շղթայի շրջադարձ
6. Կերի շղթայի շրջադարձ
7. Շարժիչային միավոր համակարգ
8. Թռչնաղբի հեռացման կոնվեյեր

Հոսքագծի յուրաքանչյուր շարքի սկզբնամասում տեղակայված է ձվի հավաքման համակարգը, որը աշխատում է վերելակային համակարգով, ապահովելով արտադրանքի անվնաս և մաքուր հավաքում, բացառելով մարդկային գործունի ազդեցությունը այդ գործընթացի վրա:

Շարքի վերջում տեղակայված է թռչնաղբի հավաքման կոնվեյորը:



Հոսքագիծը ունի մի շարք որակական առանձնահատկություններ որոնք ներկայացվում են կետերով:

- 1) Հոսքագիծը իր մեջ ներառում է ամբողջական աշխատանքային համակարգերը, որոնք պատրաստված են բարձրորակ մետաղական ցինկից և ալյումինից, որոնք ունեն հակակոռոզիոն ծածկույթ: Այս **մետաղական կոնստրուկցիան** ունի 3 անգամ

ավելի կոռոզիայի նկատմամբ կայունություն համեմատած սովորական ցինկապատ կոնստրուկցիաներին:

- 2) **Խմելու ջրի մատակարարման համակարգը** ամբողջական հավաքված է գերմանական արտադրության դետալներով: Յուրաքանչյուր վանդակում նախատեսված է 2 խմելու կետեր, պատրաստված բարձրորակ մետաղից: Գնդաձև տակաոններ, յուրաքանչյուր հարկի համար առանձին, ապահովում են ջրի անհրաժեշտ քանակությունը թռչունների համար: Համակարգը ամբողջությամբ հերմետիկ է, որի մեջ ջուրը չի կարող կեղտոտվել կամ խառնվել այլ հեղուկի հետ: Խմելու կետերի տակ տեղակայված են V-ձև ձագարներ, որոնք հավաքում են ջրի ավելցուկը, որպեսզի այն չթափվի թռչնաղբի հավաքման ժապատենային կոնվեյերի վրա:
- 3) **Կերի բաշխումը** ավտոմատացված է այն գործում է կերի բաշխման շղթայական ցիկլով: Այս համակարգը նվազագույնին է հասցնում կերի կորուստը: Համակարգը ապահովում է կերի հավասարաչափ դոզավորում: Յուրաքանչյուր հարկի համար գործում է առանձին շարժիչային միավոր, որը ապահովում է կերի մատակարարման շղթայի 23մ/րոպե արագություն:
- 4) Արտադրանքի՝ **ձվի, հավաքման վերելակային համակարգը** իրենից ներկայացնում է ժապավենային փոխարկիչ 92 մմ լայնությամբ: Յուրաքանչյուր մարտկոցի համար աշխատում է փոխանցումային մեկ ձվի հավաքման համակարգ: Վերելակային մեխանիզմը ապահովում է շարքերից ձվի հավաքումը առանձին առանձին:
- 5) **Թռչնաղբի հավաքման** ժապավենի շարժիչային մեխանիզմը հնարավորություն է տալիս կարգավորել արագությունը և ապահովել ժապավենի մաքրումը թռչնաղբից: Ժապավենը մաշվածության հանդեպ բավականին կայուն է, պոլիմերային նյութից է պատրաստված, 1մմ հաստությամբ և շարժվում է միջինում 3.7մ/րոպեում արագությամբ: Այն արտադրվում է Գերմանիայում, գրեթե հավերժ է շահագործման համար, կրծողների կողմից վնասվելու ռիսկը բացառվում է:

- 6) **Կերի մատակարարումը** իրականացվում է 2 հատ սիլոսային բունկերներից, յուրաքանչյուրը 5.79մ բարձրությամբ, 23.4 մ³ / 15.2տ տարողությամբ: Սիլոսները ի վիճակի են բեռնվելու կեր տեղափոխող բեռնատարներից և մեխանիկական և պնևմատիկ եղանակներով: Սիլոսների ալիքավոր արտաքին ծածկույթը պաշտպանում է կերը արտաքին ջերմային տատանումներից: Կերի մատակարարաման համակարգի արտադրողականությունը 10տ/ժամ է: Բունկերները հագեցած են տենզոցուցիչներով, կերի կշռման նպատակով, որոնց տվյալները գրանցվում են համակարգչում:
- 7) **Թռչնաղբի հեռացման համակարգ** նախատեսվում է յուրաքանչյուր հոսքագծի համար 1 հատ: Այն չժանգոտվող մետաղից, 500մմ լայնությամբ հատուկ տեղափոխող ժապավենով համակարգ է որից թռչնաղբը տեղափոխում է 3.4մ բարձրությամբ, բարձր արագությամբ, կոնվեյերով դեպի բեռնատար ավտոմեքենայի մեջ:
- 8) **Ջրի նախապատրաստման հանգույց** իր մեջ նարառում է ջրաչափ սարք, ջրի մաքրման ֆիլտրներ, ճնշման կարգավորման փականներ, ծախսաչափ համակարգչային կարգավորմամբ, ճնշման չափիչ սարքեր և խողովակային անցումներ:
- 9) **Օդափոխության համակարգը** լրիվ ավտոմատացված սեզոնային կարգավորումով համակարգ է համաձայն բիզնես պլանով նախատեսված սպեցիֆիկացիայի, թռչունների կենսագործունեության համար անհրաժեշտ կլիմայական պայմանների ապահովման համար: Այն իր մեջ ներառում է օդի մատակարարման և հեռացման համակարգեր:



10) Լուսավորության համակարգը կարգավորվում է համակարգչային ծրագրով:

Նախատեսվում են 240 հատ 7Վատտ հզորության լուսադիոդային (LED)

լուսատուներ: Լուսատուների մեջ հեռավորությունը 4մ, 10 շարքով:

11) Օդի խոնավեցման համակարգը նախատեսվում է 1 հատ, 192 ներարկիչներով,

ավտոմատ կառավարման համակարգով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նորմատիվաիրավական դաշտը

ԱՐԶՆՈՒ ՏՈՀՄԱՅԻՆ ԹՏԻ ԲԲԸ-ի տեխնիկական և տեխնոլոգիական վերազինման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմելիս առաջնորդվել ենք բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են հետևյալ իրավական ակտերում.

"Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքը

Օրենքը նկարագրում է Հայաստանում տարաբնույթ ծրագրերի և գործունեությունների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (այսուհետ՝ ՇՄԱԳ) և բնապահպանական փորձաքննության գործընթացները: Օրենքում օգտագործվող հիմնական սահմանումները բերված են հոդված 4-ում: Օրենքի հիմնական առարկաներն են՝ Հիմնադրությամբ փաստաթուղթը՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող փաստաթղթի (քաղաքականություն, ռազմավարություն, հայեցակարգ, ուրվագիծ, բնական ռեսուրսների օգտագործման սխեմա, ծրագիր, հատակագիծ, քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ) նախագիծ: Նախատեսվող գործունեությունը՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում:

Օրենքի հոդված 6-ը սահմանում է գնահատման և փորձաքննության նպատակն ու խնդիրները, իսկ հոդված 7-ը թվարկում է ՇՄԱԳ և փորձաքննության գործընթացում դիտարկվող շրջակա միջավայրի օբյեկտները և բնութագրերը: Օրենքի գլուխ 2-ը (8-13 հոդվածները) նկարագրում են ՇՄԱԳ և փորձաքննության գործընթացի հիմնական մասնակիցների լիազորությունները:

Հողված 14-ը թվարկում է ՇՄԱԳ և փորձաքննության ենթակա հիմնադրությային փաստաթղթերի բնագավառները և նախատեսվող գործունեությունների տեսակները, որոնք ըստ բնագավառների դասակարգվում են Ա, Բ և Գ կատեգորիայի ըստ շրջակա միջավայրի վրա նվազող աստիճանի:

Օրենքի հողված 16-ի համաձայն նախատեսվող գործունեությունների փորձաքննությունն իրականացվում է երկու փուլով՝ նախնական և հիմնական: Նախնական փուլում կազմվում է նախատեսվող գործունեության գնահատման նախնական հայտը, որի փորձաքննության հիման վրա (Ա կամ Բ կատեգորիայի գործունեության դեպքում) կազմվում է տեխնիկական առաջադրանք, ինչը հիմք է ծառայում ՇՄԱԳ հաշվետվության մշակման համար: Նախնական փորձաքննության տևողությունն է 30 աշխատանքային օր: Եթե նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի, ապա ձեռնարկողին նախնական գնահատման հայտի հիման վրա տրվում է փորձաքննության եզրակացություն:

Հողված 18-ը սահմանում է հիմնադրությային փաստաթղթի ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվության և նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության բովանդակությանը ներկայացվող պահանջները: Հողված 19-ը նկարագրում է փորձաքննության հիմնական փուլը: Սույն հողվածի 4-րդ կետի համաձայն փորձաքննության հիմնական փուլի ժամկետները չպետք է գերազանցեն հիմնադրությային փաստաթղթի և նախատեսվող գործունեության Ա կատեգորիայի դեպքում մինչև 60 աշխատանքային օր, իսկ նախատեսվող գործունեության Բ կատեգորիայի դեպքում մինչև 40 աշխատանքային օր:

Օրենքի հողված 26-ը սահմանում է ՇՄԱԳ և փորձաքննության ընթացքում հանրային ծանուցմանը և քննարկումների իրականացմանը ներկայացվող պահանջները: Հանրության ծանուցումը իրականացվում է մինչ լուումները կամ քննարկումները առնվազն 7 աշխատանքային օր առաջ զանգվածային լրատվամիջոցներով, հայտարարություններով և էլեկտրոնային փոստով: Հանրային ծանուցումը և քննարկումները իրականացվում են 19.11.2014 թ.-ի ՀՀ կառավարության "Հանրային

ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին" թիվ 1325-Ն որոշմամբ:

"Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին" ՀՀ օրենքը (2006 թ.) կարգավորում է ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները: Օրենքը դասակարգում է ՀՀ-ում հատուկ պահպանվող տարածքները. ա) ըստ նշանակության (միջազգային, հանրապետական և տեղական բնության հատուկ պահպանվող տարածքների) և բ) ըստ կատեգորիայի (պետական արգելոցի, ազգային պարկի, պետական արգելավայրի և բնության հուշարձանի):

Օրենքը նկարագրում է բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության ռեժիմները, պահպանության իրականացումը, օգտագործումը և վերահսկողությունը, սահմանում է պետական մարմինների իրավասությունները, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքներն օգտագործողների իրավունքներն ու պարտականությունները:

"Բուսական աշխարհի մասին" (1999 թ.) և **"Կենդանական աշխարհի մասին" (2000 թ.)** ՀՀ օրենքները սահմանում են ՀՀ բույսերի և կենդանիների պահպանության, պաշտպանության, օգտագործման, վերարտադրության ու կառավարման, ինչպես նաև կենսաբազմազանության վրա մարդկանց գործունեության ազդեցությունը կարգավորելու քաղաքականությունը: Այս օրենքների հիմնանպատակը բուսական/կենդանական աշխարհի և կենսաբազմազանության պահպանության ապահովումն է: Այն նաև սահմանում է տեսակների՝ մասնավորապես էնդեմիկ և վտանգված, մոնիտորինգի և գնահատման ընթացակարգերը:

"ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին" N 71-Ն և "ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին" N 72-Ն ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի որոշումները սահմանում են ՀՀ բուսական և կենդանական աշխարհների հազվագյուտ, անհետացած ու անհետացող, կրճատվող, որոշ տեսակների կենսաբանությունը, թվաքանակը, տարածման վայրերը և ձևաբանությունը:

Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման եվ հատուցման կարգը հաստատելու մասին ՀՀ Կառավարության 27 մայիսի 2015թ.-ի թիվ 764 որոշումով իրականացվում է շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում հնարավոր տնտեսական վնասների գնահատման և հատուցման հետ կապված հարաբերությունները:

"Մթնոլորտային օդի պահպանության մասին" ՀՀ օրենքը (1994թ., լրամշակվել է 2007թ.) կարգավորում է մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների հարցերը: Մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների պետական հաշվառման, ինչպես նաև մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների մշակման և հաստատման վերաբերյալ հարցերը կարգավորվում են օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերով՝ Կառավարության 22.04.1999թ թիվ 259 և 27.12.2012 թվականի թիվ 1673 որոշումներով:

Արտանետման թույլտվությունները սահմանում է մթնոլորտային օդի աղտոտման սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները: Աշխատավայրերում, բնակելի և հասարակական վայրերում, բնակարանային տնտեսություններում, ինչպես նաև շինարարական հրապարակներում աղմուկի թույլատրելի սանիտարական նորմերը սահմանվում են ենթաօրենսդրական ակտերով: Դրանցից են՝ ՀՀ կառավարության "Մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների պետական հաշվառման կարգը հաստատելու մասին" թիվ 259, "Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների մշակման ու հաստատման կարգը

սահմանելու և ՀՀ կառավարության 1999 թվականի մարտի 30-ի թիվ 192 և 2008 թվականի օգոստոսի 21-ի թիվ 953-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին" թիվ 1973-Ն և "Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների - ՍԹԿ) և Հայաստանի Հանրապետության տարածքում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների բանաձև գազերում վնասակար նյութերի պարունակության սահմանային թույլատրելի նորմատիվները հաստատելու մասին" թիվ 160-Ն որոշումները:

ՀՀ Ջրային օրենսգիրք ՀՕ-373 (04.06.2002թ.), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

ՀՀ մակերևութային ջրերի էկոլոգիական նորմերը սահմանվել են ՀՀ կառավարության 27.01.2011թ. N75-Ն որոշմամբ հաստատված կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերով:

ՀՀ Հողային օրենսգիրքը (2001թ.) սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Համաձայն Օրենսգրքի ՀՀ հողային ֆոնդը դասակարգվում է ըստ հետևյալ կատեգորիաների. 1) գյուղատնտեսական նշանակության, 2) բնակավայրերի, 3) արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, 4) էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, 5) հատուկ

պահպանվող տարածքների, 6) հատուկ նշանակության, 7) անտառային, 8) ջրային և 9) պահուստային հողերի:

Օրենսգրքի Գլուխ 6-ը նկարագրում է Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերը և դրանց հետ գործածությանը վերաբերվող ընդհանուր դրույթները:

Օրենսգրքի Գլուխ 13-ը սահմանում է հողամասերի նկատմամբ քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքները, այդ թվում. հողամասն օգտագործման տրամադրելը (անհատույց (մշտական) օգտագործման կամ վարձակալության իրավունքով), հողամասի կառուցապատման իրավունքը, հողամասի նկատմամբ իրավունքների սահմանափակումները և հողամասի սերվիտուտը: Օրենսգրքի Գլուխ 15-ը նկարագրում է պետության և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման ընթացակարգը:

"Թափոնների մասին" ՀՀ օրենքը (2004 թ.) սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքի 3-րդ գլուխը նկարագրում է թափոնների նորմավորման, հաշվառման, անձնագրավորման ընթացակարգերը: Օրենքում ներկայացված են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները, ինչպես նաև թափոնների գործածության ոլորտում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի կիրարկումն ապահովվում է կառավարության մի շարք որոշումների և բնապահպանության նախարարի հրամաններով: Մասնավորապես արտադրության և սպառման թափոնների դասակարգումը ըստ վտանգավորության դասի իրականացվում է ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թ.-ի հոկտեմբերի 26-ի "ՀՀ տարածքում գոյացող արտադրության և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին" հրամանի համաձայն:

«Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N2.2.8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին 19 սեպտեմբերի 2012թ հրամանը սահմանում են կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերին ներկայացվող հիգիենիկ պահանջները: Այս կանոնները տարածվում են կազմակերպություններում սանիտարակենցաղային սենքերի տեղակայման, նախագծման, շինարարության և շահագործման վրա:

«Խմելու տնտեսական նշանակության ջրմուղների եվ ջրամատակարարման աղբյուրների սանիտարական պահպանման գոտիներ» n 2-III-Ս2-2 սանիտարական նորմերը եվ կանոնները հաստատելու մասին ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ նոյեմբերի 29-ի թիվ 803 հրամանը և այդ հրամանի լրացում կատարելու մասին 2016թ-ի դեկտեմբերի 21-ի թիվ 45 հրամանը սահմանում են խմելու տնտեսական նշանակության ջրմուղների և ջրամատակարարման աղբյուրների սանիտարական պահպանման գոտիների կազմակերպմանը և շահագործմանը ներկայացվող սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային պահանջներ:

ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարի ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի քարտեզը, ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզը եվ ըստ սեյսմիկ գոտիների համայնքների ու բնակավայրերի ցանկը հաստատելու 2021թ մարտի 31-ի թիվ 372 հրաման:

2. Շրջակա միջավայրի և Սոցիալական նկարագիրը

Գտնվելու վայրը

ԱՐԶՆՈՒ ՏՈՀՄԱՅԻՆ ԹՏԽ ԲԲԸ տեղակայված է Կոտայքի մարզի Արզնի համայնքի տարածքում գ.Արզնի, Արզնի-Աբովյան խճ 5/2 հասցեում, Երևան-Սևան Մ4 մայրուղուց ձախ ողողությամբ, Աբովյան քաղաքից դեպի հյուսիս արմուտք 2կմ հեռավորության վրա: Հեռավորությունը հարակից բնակավայրերից և գործող օբյեկտներից ներկայացված է աղյուսակ 1-ում

Աղյուսակ 1

Ագրակիր	Հեռավորություն, մ
Գ. Արզնի	500
Ք. Աբովյան	2000
Ք. Նոր Հաճն	2000
Ք. Բյուրեղավան	1300
ԱԳԼՃԿ Երևան-Սևան մայրուղու ձախ հատված	600
ԱԳԼՃԿ Երևան-Սևան մայրուղու աջ հատված	650

Նկար 1: իրավաճիկային քարտեզ



Ընկերությանը ամենամոտ տեղակայված բնակելի տները գտնվում են 500մ և ավելին հեռավորության վրա:

ԱՐՁՆՈՒ ՏՈՀՄԱՅԻՆ ԹՏԻՒ ԲԲԸ-ի սանիտարապաշտպանիչ գոտին համաձայն
 CH 245-71 սահմանված է 300մ:


Ընկերության տարածքը գտնվում է ծովի մակարդակից 1400մ բարձրության վրա:
 Տարածքի կենտրոնական մասի աշխարհագրական կոորդինատներն են 40°17'55 հս.
 լայն. և 44°36'36 արլ. երկայն.:

Ընկերության տարածքի մոտ քաղաքային համայնքներն են ք. Աբովյանը, ք. Նոր
 Հաճնը և ք. Բյուրեղավանը:

Arm WGS-84 համակարգի կոորդինատները ներկայացված են աղյուսակում:

Աղյուսակ 2

	Կոորդինատներ	
	X	Y
1	8467161.2191	4462998.9394
2	8467102.1149	4463041.0992
3	8467098.2822	4463035.7260
4	8467091.6620	4463026.4452
5	8467084.6607	4463031.4393
6	8467064.9745	4463003.8410
7	8467038.8762	4463045.1182
8	8467024.2436	4463072.4474
9	8467083.9989	4463156.2191
10	8467083.9989	4463163.9532
11	8467107.6579	4463190.3133
12	8467172.1455	4463151.9520
13	8467150.8180	4463120.2255
14	8467149.6375	4463121.0676
15	8467144.4057	4463113.1303
16	8467163.7001	4463099.3674
17	8467183.2387	4463085.4303
18	8467209.5344	4463066.6733
19	8467257.0328	4463036.9363
20	8467244.7351	4463014.4067
21	8467189.9.63	4463039.1564
22	8467188.2781	4463040.3178
23	8467170.2760	4463015.0805
24	8467171.9043	4463013.9190



Կոտայքի սարահարթը տարածվում է Հրազդան գետի միջին հոսանքի ձախափնյա մասից մինչև Գեղամա լեռների արևմտյան ստորոտները : Գեղամաս լեռնաշղթան կենտրոնական մասում բարձրացած հիմքով լեռնավահան է, մոտ 65 կմ

երկարությամբ և 35 կմ լայնությամբ, որի վրա շարված են բազմաթիվ հրաբխային կոներ, այդ թվում ամենաբարձր գագաթ Աժդահակը՝ 3597.3 մ բարձրությամբ, ինչպես նաև Սևկատարը 3225.1մ, Սպիտակասարը 3555.7մ, Նազելին 3312մ, Վիշապասարը 3157.7մ, Եռակատարը 2589.6մ, Գեղասարը 3443մ, Ծաղկավետր 3076մ, Մանկունքը 2932.1մ: Հաճախ Գեղամա լեռնաշղթայի մեջ են մտցվում նաև Հատիս 2529.4մ, Գութանասար 2299.6մ, Մենակսար 2399.4մ, Մեծ Լճասար 2393.8մ, Փոքր Լճասար 2334.2մ, Արմաղան 2829.1մ և այլ հրաբխային լեռնագագաթներ, որոնք բավական հեռու են տեղադրված բուն լեռնաշղթայից:

Շրջակա միջավայրի նկարագիրը

Կոտայքը մարզը կենտրոնական դիրք է գրավում Հայաստանի տարածքում: Արևելքում սահմանակցում է Գեղարքունիքի մարզին, հյուսիսում և հյուսիս-արևելքում համապատասխանաբար Լոռու և Տավուշի մարզերին, հարավում սահմանակից է Արարատի մարզին և քաղաքամայր Երևանին, իսկ ամբողջ արևմուտքում՝ Արագածոտնի մարզին: Ամենաերկար սահմանագիծը Արագածոտնի մարզի հետ անցնող սահմանն է, իսկ ամենակարճը՝ Տավուշի մարզի սահմանը: Կոտայքը գտնվում է Արարատյան գոգավորության նախալեռան հյուսիս-արևելքում՝ Հրազդան և Ազատ գետերի միջև, Կոտայքի սարավանդի վրա: Հյուսիս-արևելքում բարձրանում են Գեղամա լեռնաշղթան և Ողջաբերդի լեռնաբազուկը, արևմուտքում ձգվում է Հրազդանի կիրճը, իսկ հարավում՝ Նորքի բարձրությունը: Կոտայքի մարզի կենտրոնական հատվածում՝ Հրազդան գետի երկու ափերին, տարածվում են Կոտայքի և Եղվարդի թույլ մասնատված լավային սարավանդերը: Կենտրոնական հատվածում են գտնվում Գութանասարի, Արայի և Հատիս լեռնագագաթները:

	
<p>Գեղամա լեռների ընդհանուր տեսքը, մինչև՝ Սևանա լիճ</p>	<p>Աժդահակ լեռը</p>

Նկար2; Լեռնագագաթները

Մարզի հարթավայրերն են՝ Եղվարդի հարթավայրը (գտնվում է ծովի մակերևույթից 1200-1300մ բարձրության վրա) և Հրազդանի սարահարթը (ծովի մակերևույթից՝ 1700-1800մ բարձրության վրա): Ամենաբարձր կետը Աժդահակ լեռն է՝ 3598մ բարձրությամբ: Աժդահակ լեռը գտնվում է Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի սահմանագլխին: Ռելիեֆը մեղմ ալիքավոր է, տեղ-տեղ բարձրանում են մնացորդային բլուրներ և խարամային կոներ: Ծածկված է Գեղամա լեռնաշղթայի հրաբուխներից արտավիժած լավաներով ու տուֆերով, որոնք ընդարձակ աստիճաններով Ողջաբերդի լեռնաբազուկից ձգվում են դեպի Գետառի ալյուվիալ հովիտը:

Թեք ու անտառազուրկ լանջերում շատ են հեղեղատներն ու փոքր հովիտները: Շրջանի տարածքի մեծ մասում տեղանքի թեքությունները 8°-ից չեն անցնում, ուստի տնտեսական յուրացման համար համեմատաբար դյուրին են: Կոտայքի մարզի հողաբուսական ծածկույթը բավականին խայտաբղետ է: Գերակշռում են լեռնատափաստանային և լեռնաշագանակագույն, բարձրադիր վայրերում՝ ենթալպյան լեռնամարգագետնային, սևահողանման ու դարչնագույն հողերը: Մարավանդներին բնորոշ են շագանակագույն հողերը և չոր տափաստանային լանդշաֆտները: Լեռնալանջերին սևահողային ծածկույթի վրա ձևավորվել են լեռնային տափաստաններ: Ծաղկունյաց լեռների և Մարմարիկի հովտի անտառների տակ

տարածվում են գորշ դարչնագույն հողերը: Բարձրադիր լեռնային գոտուն բնորոշ է լեռնամարգագետնային լանդշաֆտը: Գետահովիտներում կուլտուրացված ոռոգվող հողեր են: Բարձրադիր մասերում տարածված են խոտհարքներն ու ամառային արոտավայրերը: Լավ են արտահայտված բնական լանդշաֆտային գոտիները:

Կլիմա

Շրջանի կլիման բնութագրվում է մեղմ մայրցամաքային կլիմայով՝ խիստ ամառ և ձմեռ ունեցող կլիմա: Շրջանի կլիման ըստ Բարձրության փոխվում է տաք չոր ցամաքայինից մինչև ձյունամերձը: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը տատանվում է 10 °C-ից մինչև 2.5 °C:

Տարվա ամենատաք ամիսը հուլիսն է, իսկ ամենացուրտը՝ հունվարը: Կոտայքի մարզի ցածրադիր շրջաններում միջին հունվարյան ջերմաստիճանը կազմում է 4.5-5 °C: Բարձրադիր շրջաններում հունվարյան ջերմաստիճանը նվազում է մեկ և ավելի ջերմաստիճանով՝ -3.6 °C:

Կոտայքի մարզի բարձրադիր շրջաններում ամառվա ամենատաք ամսին գրանցվում է միջինում 8.7 °C ջերմություն: Ցածրադիր շրջանների եղանակային պայմանները բավականին տարբեր են: Միջին հուլիս-օգոստոսյան ջերմաստիճանը ցածրադիր գոտիներում կազմում է 22.2 °C և ավելի:

Ամենացածր ջերմաստիճանը Կոտայքի մարզում գրանցվում է Աժդահակ լեռան գագաթին:Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը կազմում է՝ 400-970 մմ: Տարբեր ամիսներին տեղում է անձրև, կարկուտ, իսկ ձմեռային ամիսներին՝ ձյուն:

Անսառնամանիք օրերի թիվը մարզի ստորին գոտում կազմում է շուրջ 200 օր:

Ամենուր դիտվում են լեռնահովիտային քամիներ: Օդի բազմամյա միջին տարեկան հարաբերական խոնավությունը կազմում է 67.0%:

Օդի միջին ջերմաստիճանը, °C , ըստ ամիսների

Բնակավայր՝ Արզնի, Նիշ ծովի մակերևույթից	Ամիսներ												տա րի
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
1200 - 1600	-4.5	-2.5	2.8	9.5	14.2	18.2	18.1	14.4	8.2	2.0	-4.4	6.1	11.4

Բացարձակ նվազագույն ջերմաստիճանը՝ -26°C, բացարձակ առավելագույնը՝ +36°C: Տարածքը գտնվում է Անդրկովկասի առավել չոր, երաշտային շրջաններից մեկում: Տարվա ընթացքում տեղումների գումարային միջինը կազմում է 475 մմ, օրական առավելագույն քանակը 42 մմ:

Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %

Միջին հարաբերական խոնավությունը ժամը 15-ի դրությամբ տվյալներն ամենացուրտ և ամենաշոգ ամսների համար բացակայում են:

Բնակավայր՝ Արզնի, Նիշ ծովի մակերևույթից	Ամիսներ												տարի
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
1200 - 1600	76	68	61	60	59	53	51	49	53	61	70	77	65

Ամառ՝ տաք, խոնավ, միջին ջերմաստիճանը հուլիսին 16°C-ից մինչև 20°C, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին) 45-60%, բարենպաստ քամիներ, միջին արագությունը՝ 2.0-3.0մ/վ:

Ձմեռ՝ չափավոր ցուրտ, թույլ քամիներով և օպտիմալ խոնավությամբ, միջին ջերմաստիճանը հունվարին 0°C -ից մինչև. մինուս 5°C, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին)՝ 50-70%, քամու միջին արագությունը՝ 3.0-5.0 մ/վ


Մթնոլորտային միջին ամսական տեղումները, մմ

Նիշ ծովի մակերևույթից բարձր, մ	Ամիսներ												տարի
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
1200 - 1600	34	43	44	58	77	40	25	16	26	34	40	38	475

Ձնածածկույթ

Նիշ ծովի մակերևույթից, մ	Առավելագույն տասնօրյակային բարձրու թյունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը
1200 - 1600	-	69

« տարածքի կլիմայական շրջանացումը
 շինարարության համար




Նկ. 3 Կլիմայական շրջանացման սխեմատիկ քարտեզ


Մեյամիկ բնութագիր

Հայաստանի Հանրապետությունը տարածքը գտնվում է Եվրասիական և Արաբական լիթոսֆերային խոշոր սալերի բախման գոտում և այս հանգամանքով է բացատրվում տարածաշրջանի բարձր սեյսմիկականությունը: ՀՀ տարածքում հյուսիսից հարավ առանձնացվում են հետևյալ սեյսմիկ զոնաները. Մերձքուռյան, ՍոմխեթաՂարաբաղի, Մերձսևանյան, Կապան-Գոգորանի, Ծաղկունյաց-Զանգեզուրի, Երևան-Օրդուբաղի, Ուրծ-Վայքի: Նշված զոնաների սահմաններով են անցնում երկրկետևի խորքային բեկվածքները: Դրանցից ամենախոշորն են Սևան-Աքերայի, Շիրակ – Զանգեզուրի և Միջին Արաքսյան /Երևանյան/ բեկվածքները: Բեկվածքները թափանցում են երկրկետևի 40-50 կիլոմետր խորություններ, իսկ երկրկետևի մակերեսին արտահայտվում են 5-10 կմ լայնություն ունեցող գոտիներով, որոնց բնորոշ է օֆիոլիթային գուգորդության ձևափոխված ապարներ:

Համաձայն ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարի 2021թ մարտի 31-ի թիվ 372 հրամանի Արգնի գյուղը դտնվում է երկրորդ սեյսմիկ գոտում, **Գ Ր Ո Լ Ն Ս Ի**
հ ո ռ ի զ ո ն ա կ ա ն ար ա գ ա ց մ ա ն մ ե ծ ո ւ թ յ ո ւ ն ը a=400 ս մ /վ ը կ ²



Նկար4; ՀՀ տարածքի սելյաֆիկ վտանգի քարտեզ



Նկար5; ՀՀ տարածքի սելյամիկ գոտիավորման քարտեզ

Հողաբուսական ծածկույթ

Կոտայքի մարզի հողաբուսական ծածկույթը բավականին խայտաբղետ է: Գերակշռում են լեռնատափաստանային և լեռնաշագանակագույն, բարձրադիր վայրերում՝ ենթալպյան լեռնամարգագետնային, սևահողանման ու դարչնագույն հողերը: Մարավանդներին բնորոշ են շագանակագույն հողերը և չոր տափաստանային լանդշաֆտները: Լեռնալանջերին սևահողային ծածկույթի վրա ձևավորվել են լեռնային

տափաստաններ: Ծաղկունյաց լեռների և Մարմարիկի հովտի անտառների տակ տարածվում են գորշ դարչնագույն հողերը: Բարձրադիր լեռնային գոտուն բնորոշ է լեռնամարգագետնային լանդշաֆտը: Գետահովիտներում կուլտուրացված ոռոգվող հողեր են: Բարձրադիր մասերում տարածված են խոտհարքներն ու ամառային արոտավայրերը:

Հանքավայրի տեղամասին բնորոշ են լեռնաանտարային գորշ և դարչնագույն հողերը: Այս հողերում մշակում են հացահատիկային, բանջարաբոստանային բույսեր, պտղատու ծառեր:


Բուսականության տեսակային կազմի տարածքային տարբերությունը համընկնում է կլիմայի և հողերի վերընթաց գոտիականությանը:

Տափաստանային գոտու բուսականությունը մեր հանրապետությունում տարածված 1200-2400 մ բարձրություններում: Այս գոտուն բնորոշ է փետրախոտային, սիզախոտային, իսկ բարձրադիր մասում՝ հացազգի-տարախոտային բուսականությունը: Տափաստանային գոտու վերին սահմանին մոտ, որտեղ խոնավությունը բավարար է, աճում են մերձալպյան բարձրախոտերը: Այս տարածքները լավ խոտհարքեր են:

Կոտայքի մարզի բուսականության հիմնական տիպերի աշխարհագրական տեղաբաշխումը պայմանավորված է վերընթաց գոտիականությամբ: Փամբակի և Ծաղկունյաց լեռների լանջերին աճում են հաճարենի, կաղնի, բոխի, սոճի, լոբենի, կեչի, թեղի, հացենի և այլն:

Կոտայքի մարզում հատկապես առատ են մշակաբույսերի վայրի ազգակիցները՝ ցորենը, աշորան, գարին, վարսակը, ոլոռը, ճակնդեղը, զանազան հատապտուղներ, կորիզավոր, ունդավոր, կերային, բանջարանոցային բուսատեսակներ և այլն

Ստորև նկարում ներկայացվում է հողերի տարածման սխեմատիկ քարտեզը՝



ՀՈՂԱՅԻՆ ՏԻՊԵՐ

1	Լեռնամարգագետնային ճնատորֆային խճային	32	Սևահող տիպիկ ալրային կարբոնատային
2	Լեռնամարգագետնային ճնային խորքային հագեցած	24	Անտառային դարչնագույն կարբոնատային տափաստանացված
3	Լեռնամարգագետնային ճնային խորքային չհագեցած	34	Սևահող կարբոնատային մնացորդային կարբոնատային
4	Լեռնամարգագետնային թույլ ճնային խորքային հագեցած	35	Մարգագետնասևահողային կոպճային
5	Լեռնամարգագետնային թույլ ճնային խորքային չհագեցած	36	Մուգ շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
7	Մարգագետնատափաստանային սևահողանման խճաքարային	37	Մուգ շագանակագույն մնացորդային կարբոնատային
9	Մարգագետնատափաստանային տիպիկ մնացորդային չհագեցած	38	Շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
12	Անտառային գորշ ուժեղ չհագեցած կավայնացած	39	Շագանակագույն մնացորդային կարբոնատային
17	Անտառային դարչնագույն կրազերծված խճաքարային	55	Գետահովտադարավանդային մարգագետնային կոպճային
18	Անտառային դարչնագույն կրազերծված տափաստանացված	56	Գետահովտադարավանդային մարգագետնացած կոպճային

Ջրային ռեսուրսներ

Կոտայքի մարզն աչքի է ընկնում ջրային ռեսուրսների առատությամբ: Գետերից- Հրազդանը, Գետառը, Ագատը ունեն ոռոգիչ նշանակություն:

Հրաբխածին-նստվածքային ապարների մեջ ներծծված ջրերն աղբյուրների տեսքով դուրս են գալիս լեռների ստորոտներում, ինչպես նաև Հրազդան և Ագատ գետերի կիրճերում:

Տարածաշրջանի գլխավոր ջրային երակը Հրազդան գետն է, որը սկիզբ է առնում Սևանա լճից և թափվում Արաքս գետ: Գետի երկարությունը 146.0 կմ է:

ՀՐԱԶԴԱՆ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ԶՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԴԻՏԱՑԱՆՑ



Մակերևութային ջրեր: Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոլեկտրաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից մակերևութային ջրերի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) ջրային օբյեկտների (գետեր, ջրամբարներ, Արփա-Սևան ջրատարը և Սևանա լիճը) 144 դիտակետ: Ջրի որակը բնութագրվում է ֆիզիկաքիմիական մինչև 45 ինդիկատորային ցուցանիշով (հիմնական անիոններ և կատիոններ, սնուցող նյութեր, ծանր մետաղներ, առաջնային օրգանական աղտոտիչներ): Ջրի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշման:

Թիվ 54 դիտակետը գտնվում է Արզնի համայնքի հարևանությամբ, որտեղ մակերևութային ջրի որակը դասվում է 5-րդ դաս:

ՀՐԱԶՂԱՆԻ ԶՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՀՐԱԶՂԱՆ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ (ՄԻԶԻՆ ՆԵՐՔԻՆ ՀՈՍԱՆՔ) ԳԵՏԵՐԻ ԶՐԵՐԻ ՈՐԱԿԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ

<i>Որակի ցուցանիշներ</i>	Որակի դաս					Միավոր
	I	II	III	IV	V	
Լուծված թթվածին	>7	>6	>5	>4	<4	մգ _{o₂} /լ
ԹԿՊ ₅	3	5	9	18	>18	մգ _{o₂} /լ
ԹՔՊ-Cr	10	25	40	80	>80	մգ _{o₂} /լ
Ամոնիում իոն	0,020	0,4	1,2	2,4	>2.4	մգN/լ
Նիտրիտ իոն	0,006	0,06	0,12	0,3	>0,3	մգN/լ
Նիտրատ իոն	0,310	2,5	5,6	11,3	>11,3	մգN/լ
Ֆոսֆատ իոն	0,03	0,1	0,2	0,4	>0,4	մգ/լ
Ցինկ, ընդհանուր	3.0	100	200	500	>500	մկգ/լ
Պղինձ, ընդհանուր	3.0	23.0	50	100	>100	մկգ/լ
Քրոմ, ընդհանուր	1.0	11.0	100	250	>250	մկգ/լ
Արսեն, ընդհանուր	0,13	20	50	100	>100	մկգ/լ
Կադմիում, ընդհանուր	0,02	1,02	2,02	4,02	>4,02	մկգ/լ
Կապար, ընդհանուր	0,3	10,3	25	50	>50	մկգ/լ
Նիկել, ընդհանուր	1.0	11.0	50	100	>100	մկգ/լ
Մոլիբդեն, ընդհանուր	7	14	28	56	>56	մկգ/լ
Մանգան, ընդհանուր	5	10	20	40	>40	մկգ/լ
Վանադիում, ընդհանուր	1	2	4	8	>8	մկգ/լ
Կոբալտ, ընդհանուր	0,14	0,28	0,56	1,12	>1,12	մկգ/լ
Երկաթ, ընդհանուր	0,08	0,16	0,5	1	>1	մգ/լ
Կալցիում	9,7	100	200	300	>300	մգ/լ
Մագնեզիում	2,8	50	100	200	>200	մգ/լ
Բարիում	9	18	36	1000	>1000	մկգ/լ

Բերիլիում	0,014	0,028	0,056	100	>100	մկգ/լ
Կալիում	1,5	3,0	6,0	12,0	>12,0	մգ/լ
Նատրիում	5	10	20	40	>40	մգ/լ
Լիթիում	1	1		<2500	>2500	մկգ/լ
Բոր	9	450	700	1000	>2000	մկգ/լ
Ալյումին	65	130	260	5000	>5000	մկգ/լ
Սելեն, ընդհանուր	0,5	20	40	80	>80	մկգ/լ
Ծարիր, ընդհանուր	0,2	0,38	0,76	1,52	>1,52	մկգ/լ
Անագ, ընդհանուր	0,09	0,18	0,36	0,72	>0,72	մկգ/լ
ԹՔՊ-Mn	2	10	15	20	>20	մգ ₀₂ /լ
Ընդհանուր անօրգանական ազոտ	0,4	4	8	16	>16	մգN/լ
Ընդհանուր ֆոսֆոր	0,025	0,2	0,4	1	>1	մգ/լ
Քլորիդ իոն	4,24	8,48	150	200	> 200	մգ/լ
Սուլֆատ իոն	10,3	20,6	150	250	> 250	մգ/լ
Սիլիկատ իոն	10,4	20,8	41,6	83,2	>83,2	մգ Si/լ
Ընդհանուր հանքայնացում	74	148	1000	1500* *ռոռոգման համար 1000	>1500	մգ/լ
Էլեկտրահաղորդականություն	113,7	227,4	1000	1500* *ռոռոգման համար 1000	>1500	մկՍիմ/սմ
Կոշտություն	0,8	10	20	40	<40	մգէկվ/լ
Կախված մասնիկներ	2,8	3,4	5,7	11,4	>11,4	մգ/լ
Հոտ (20°C and 60°C)	<2 (բնական)	2 (բնական)	2	4	>4	բալ
Գույն	(բնական)	<5 (բնական)	20	30	>200	աստիճան

Ստորերկրյա քաղցրահամ ջրեր: Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից ստորերկրյա քաղցրահամ ջրերի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված են Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) 100 ստորերկրյա ջրաղբյուր, ինչը ներառում է 25 շատրվանող հորատանցք, 32 չշատրվանող հորատանցք և 43 բնաղբյուր: Ջրաղբյուրներում կատարվում են ջրի ծախսի, մակարդակի (ճնշման) և ջերմաստիճանի դիտակումներ՝ ամսական 6 անգամ հաճախականությամբ: Տարեկան 2 անգամ կատարվում է նաև ստորերկրյա ջրերի որակի մոնիթորինգ 40 ջրաղբյուրում, որոնցից յուրաքանչյուրում որոշվում է շուրջ 40 ինդիկատորային ցուցանիշ (հիմնական անիոններ և կատիոններ, մետաղներ, աղային ռեժիմի տարրեր):



Ստորերկրյա քաղցրահամ ջրերի մոնիթորինգի դիտացանցերը Հրազդան գետի ավազանում տեղակայված են հիմնականում ստորին և վերին հոսքերում: Ընկերության տարածքին մոտ, որը տեղակայված է Հրազդան գետին միջին հոսանքում, դիտակետեր չկան համաձայն Հրազդան գետի ավազանի ստորերկրյա ջրերի մոնիտորինգի դիտացանցի քարտեզի:

Մթնոլորտային օդ

ՀՀ տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից:

Մթնոլորտային օդի մոնիթորինգի դիտակայաններ կամ պասիվ նմուշառիչներ երևակման տեղամասում կամ նրա շրջակայքում տեղադրված չեն, ուստի օդային

ավազանի աղտոտվածության վերաբերյալ տվյալներ չկան: Այսպիսի դեպքերում բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին պատկերացում կազմելու համար օգտվում ենք <<ՀՀ բնակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները>> ուղեցույց-ձեռնարկից:

Ըստ ուղեցույցի սահմանվել է, որ մինչև 10 հազար բնակչություն ունեցող բնակավայրերի համար, որոնց թվին է դասվում Արզնի համայնքը, օդի ֆոնային աղտոտվածությունն ունի հետևյալ ցուցանիշները.


Փոշի՝ 0.2մգ/մ^3 ,

Ծծմբի երկօքսիդ՝ 0.02մգ/մ^3 ,

Ազոտի երկօքսիդ՝ 0.008մգ/մ^3 ,

Ածխածնի օքսիդ՝ 0.4մգ/մ^3 :

**ՀՀ քաղաքների մթնոլորտային աղտոտվածության
ցուցանիշը 2020 թվականին**



Աղմուկ

Ընկերության տարածքում աղմուկի աղբյուր կարող են հանդիսանալ միայն ավտոտրանսպորտային միջոցները, սակայն քանի որ դրանց ինտենսիվությունը շատ ցածր է և հիմնական տրանսպորտային միջոցները միջին մեծության բեռնափոխադրողներ միջոցներ են, աղմուկի մակարդակը նույնպես բարձր չէ:

Հաշվի առնելով ընկերության հեռավորությունը բնակավայրերից, ընկերությունը աղմուկի ներդրումը չունի ընդհանուր գումարային ձայնային բնութագրիչի վրա:

Կենսաբազմազանություն

Հիմք ընդունելով այն փաստը, որ Արզնու թռչնաբուծական ֆաբրիկան կառուցված է և շահագործվում է դեռևս խորհրդայն տարիներից /այսինքն տարածքը արդեն իսկ խախտված է և կառուցապատված/, ուստի այս բաժնում ներկայացվում է տարածաշրջանին բնորոշ կենդանական և բուսական աշխարհի մասին տեղեկատվություն: Նախատեսվող գործունեության՝ ֆաբրիկայի վերազինման, արդյունքում նոր տարածքներ չեն խախտվելու և հարակից տարածքների կենդանական ու բուսական աշխարհի, ինչպես նաև տարածաշրջանում առկա բնության հատուկ պահպանվող տարածքների վրա հնարավոր բացասական ազդեցություն չի ակնկալվում:

Հայաստանի աշխարհագրական դիրքը, երկրաբանական բարդ կառուցվածքը, բարձունքային գոտիականությունը, բուսակենդանական աշխարհների տարբեր նահանգների սահմանագծում գտնվելը նպաստել են կենսաբազմազանության և էկոհամակարգերի հարստացմանը: Ինտենսիվ մարդկային գործունեությունը բացասաբար է ազդել Հայաստանի հարուստ կենսաբազմազանության էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների վրա:

Բուսական աշխարհ

Քանի որ տարածքը արդեն կառուցապատված է հաշվետվությունում ներկայացվում է գործունեության տարածաշրջանին բնորշ բուսական և կենդանական աշխարհը:

Քննարկվող տարածաշրջանը գտնվում է կիսաանապատային գոտում, որին բնորշ են օշինդրային և էֆեմերային բուսածածկը՝ *Artemisia fragrans* Willd.; *Kochia prostrata* (L.), Schrad.; *Capparis spinosa* Willd.; *Ceratoides papposa* Botsch. et Ikonn.; *Atropaxis spinosa* L.; *Rhamnus pallasii* Fisch. et Mey.; *Tanacetum argyrophyllum* (C. Koch) Tzvel.; *Poa bulbosa* L.; *Bromus*; *Aegilops*; *Eremopyrum*; *Alyssum*; *Aeluropus littoralis* (Gouan) Parl:

Այս գոտու լանդշաֆտների մեծ մասը վերափոխվել է ջերմասեր կուլտուրաների ագրոլանդշաֆտների: Տարածաշրջանին բնորշ է լեռնային չորասեր (ֆրիգանոիդ) բուսականության տիպը: Սրանց հաճախ կոչում են կմախքային լեռների բուսականություն, որի վրա նկատվում է իրանական անապատների ազդեցությունը: Կիսաանապատների ամենաբնորշ բուսատեսակը օշինդր բուրավետն է (*Artemisia fragrans*), որոշ տեղերում՝ դրան մոտ տեսակները (օրինակ՝ *Artemisia araxina*): Քարնանը այս տարածքները ծածկվում են էֆեմերներով (*Ceratocephala falcata*, *Anisantha tectorum* և ուրիշներ): Կիսաանապատներին բնորշ տեսակներից են նաև կապար փշոտը (*Capparis spinosa*), զուգատերև սովորականը (*Zygophyllum fabago*) և այլն: Վայրի օգտակար բուսատեսակներից հանդիպում են Անթառամ հայկական (*Helichrysum armenium*), Ջրապղպեղ (*Polygonum hydropiper*), Ալոճենի մուգ արնագույն և այլ տեսակներ (*Crataegus astrosanguinea*), Գնարբուկ խոշորաբաժակ (*Primula macrocalyx*), Առյուծագի սրտային (*Leonorus cardiaca*), Օձագալար մսակարմիր (*Polygonum cameum*):

ՀՀ կարմիր գրքում գրանցված բույսերից տարածքում հանդիպում են Կատվախոտ բրգաձև (*Linaria pyramidata*), Թանթրվենի Տիգրանի (*Sambucus tigranii*): Էնդեմիկ տեսակներ չեն արձանագրվում:

Կենդանական աշխարհ

Յուրաքանչյուր բուսական վերընթաց գոտի, ներառյալ՝ կիսաանապատայինն, ունի իր յուրահատուկ կենդանական աշխարհը: Միննույն ժամանակ կենդանիների որոշ տեսակներ, իրենց էկոլոգիական պլաստիկության շնորհիվ, հանդիպում են գրեթե բոլոր լանդշաֆտային գոտիներում: Երկկենցաղաների և սողունների ընտանիքներից տարածված են դողոշներ, սխտորագորտեր, ծառագորտեր, իսկական գորտեր, ջրային կրիաներ, ցամաքային կրիաներ, գեկոնայիններ, ագամայիններ, իլիկաօձեր, սցինկայիններ, իսկական մողեսաներ, կույր օձիկներ, սահնաօձեր, իժեր: Թռչուններից տարածված են՝ հավանմանները, կռունկանմանները, աղավնանմանները, ներկարարանմանները, ճնճղուկանմանները: Կաթնասուններից՝ ոզնիները, գետնափորերը, պայտաքթերը, հարթաքթերը, նապաստակակերպերը, խոզուկները, խոզերը, նուտրիաները, սկյուռանմանները, ճագարանմանները, մկնակերպերը, կուրամկները, կզաքիսերը, բորենիները, շնագզիները, կատվագզիները:

Կիսաանապատային գոտում տարածված են հիմականում Իրանական բարձրավանդակին, մասամբ նաև Միջին Ասիային բնորոշ ողնաշարավոր կենդանիներ: Կաթնասուններից հանդիպում են սովորական դաշտամուկը (*Microtus arvalis*), կզաքիսը (*Martes martes*), աղվեսը (*Vulpes vulpes*), մեծականջ ոզնին (*Erinaceus auritus*), շեկ իրիկնաչղջիկը (*Nyctalus noctula*), Օգնի մաշկեղը (*Vespertilio ognevi*), ականջեղը (*Plecotus auritus*) և այլն:

Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Ընկերության գործունեության տարածքների շուրջ չկան բնության հատուկ պահպանվող տարածքներ:

ԲՀՊՏ համար առկա է «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման

բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին»>> ՀՀ կառավարության 25.09.2014 թ. N- 1059-Ա որոշում:

**ԲՀՊՏ-ների պահպանությունն իրականացնող ՊՈԱԿ-ների կազմում ընդգրկված
ԲՀՊՏ-ները**

ՊՈԱԿ	ԲՀՊՏ-ներ	Տարածքը հա	ՀՀ մարզը
«Խոսրովի անտառ» պետական արգելոց	«Խոսրովի անտառ» պետական արգելոց	23213.5	Արարատ, Կոտայք
	«Խոր վիրապ» արգելավայր	50.3	Արարատ
	«Գոռավանի ավազուտներ» արգելավայր	95.9	Արարատ
«Արգելոցապարկային համալիր»	«Էրեբունի» պետական արգելոց	118.75	Կոտայք
	«Որդան կարմիր» արգելավայր	219.85	Արմավիր
	«Ջերմուկի ջրաբանական» արգելավայր	17371.76	Վայոց Ձոր
	«Հանքավանի ջրաբանական» արգելավայր	5202.9	Կոտայք
	«Սոճուտ» դենդրոպարկը	35	Լոռի
	Իջևանի դենդրոպարկը	14,6	Տավուշ
	«Վանաձոր» դենդրոպարկը	1,9	Լոռի
	Բերդի «Սորաններ»	62	Տավուշ
	«Ջրվեժ» անտառպարկը	423.8	Կոտայք

Պատմամշակույթային քննության հարցեր

Նախկինում Արզնի համայնքը կոչվել է Արծնի, Սարջալա, ասորաբնակ լինելու համար կոչվել է նաև Արզնի-Ասորիք: Հայտնի է եղել որպես զուտ հայկական գյուղ: Սրա ապացույցներն են Արզնիի տարածքի շինությունների և պարիսպների ավերակները, մինչև 19-րդ դարի վերջերը, պարիսպներից դուրս, հյուսիսահին կողմում սրբատաշ քարից շինված դեռևս կանգուն 2 մատուռները, խաչարձաններով հարուստ գերեզմանատունը: Արզնի անվան ամենահին հիշատակությունը գալիս է 15-րդ դարի կեսերից, որի ստուգաբանությունը կապված է Արա Գեղեցիկի և Շամիրամի առասպելի հետ: Մեկնաբանվում է մեռածների միջից Արային գննիր իմաստով: Գյուղում կա 6-րդ դարի կանգուն եկեղեցի, իսկ հին եկեղեցիների քարերով ասորիները կառուցել են նաև իրենց եկեղեցին: Նրա տարածքում հայտնաբերվել են քարե դարի և նեոլիթի ժամանակաշրջանի նյութեր: Հրազդանի կիրճի ձորում կան քարայրներ, որոնք հնում ծառայել են որպես պատսպարան և ունեցել պաշտպանական նշանակություն: Ներկայումս գյուղը հայտնի է որպես առողջարանային գոտի, որտեղ գործում են 5 առողջարաններ: Գյուղից ոչ հեռու գտնվում է Արզնի ՀԷԿ-ը:

Արզնի, առողջարանային գյուղ է Հայաստանում, ՀՀ Կոտայքի մարզում: Գտնվում է մարզկենտրոնից 29.0կմ հարավ-արևմուտք, Երևանից 23.0 կմ դեպի հյուսիս, Հրազդան գետի ձախափնյա սարավանդի վրա, ծովի մակարդակից 1340 մ բարձրության վրա:

Մատուռ ՄԲ. Պողոս-Պետրոս 13-14-րդ դդ. գյուղի ամ' եզրին, Հրազդան գետի կիրճի ձախափնյա բարձրունքին /ավերված է, պահպանվել են պատերի ստորին շարքերը շարված գորշ դարչնագույն տուֆով/: Միջնադարյան մատուռի հիմքերի վրա տասնամյակներ առաջ կառուցվել է փոքր, անշուք մատուռ /այն այսօր էլ կանգուն է/: Մատուռից հվ, կիրճում գտնվող բնական մեծ քարայրը, որը միջնադարում, անկասկած, օգտագործվել է, ընդգրկված է մատուռի պահպանական գոտու սահմանների մեջ: Մատուր ՄԲ.Մարիամ Աստվածածին, 20-րդ դարի, գերեզմանոց 7-19-րդ դդ. Հուշարձանը գտնվում է գյուղի հարավային եզրին, գործող գերեզմանոցի հվ մասում: Պահպանվել են

պատմական գերեզմանոցի մնացորդները 20-րդ դարի կառուցված Մբ. Մարիամ Աստվածածին մատուռի ամ. պատի տակ: Մատուռի ներսում դրված են վաղ միջնադարյան հավասարաթև, փոքր (տրամագիծը 32սմ) կլորավուն խաչքար, թևավոր խաչի բեկորներ և փայտե սյան խարխիս:

Ասորական Մբ. Աստվածածին եկեղեցին գտնվում է գյուղի արևմտյան մասում: Ներքուստ և արտաքուստ ուղղանկյուն հատակագծով, 18x8 մ արտաքին չափերով կառույց է: Կառուցված է անմշակ, միջին չափի քարերով: Պատերի անկյունաքարերը, մուտքերի և լուսամուտների եզրաքարերը սրբատաշ տուֆից են: Հվ. ճակատին կառուցված է խաչքար (15-16դդ): Խաչքարի (16-17դդ) մի փոքր բեկոր էլ կառուցված է արևմտյան. ճակատին, հյուսիսային որմնամույթի վրա: 1990-ական թ. վերջ վերանորոգել են եկեղեցու ամ. պատը, տանիքը, բարեկարգել են շրջակայքը: 2002թ եկեղեցու արևելյան կողմում տեղադրել են 1915թ. Մեծ եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող հուշաքար: Արգնին առողջավայր է, հայտնի է իր հանքային ջրերով: Արգնիի առողջարանները կառուցված են նաև Հրազդանի կիրճում, գետի երկու ափերին:

Ընկերության տարածքում չկան պատմամշակույթային հուշարձաններ:

"Հայաստանի Հանրապետության 2004 թվականի Կոտայքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին" թիվ 1739-Ն որոշման մեջ ներկայացված է ՀՀ Կոտայքի մարզի պատմամշակույթային հուշարձանների ցանկը:

Արգնի գյուղ

1	2	3	4	5	6	7	8
1			ԲԱՅՕԹՅԱ ԿԱՅԱՆ	քարի դար	«Արգնի» առողջարանի մոտ, Հրազդան գետի աջափնյա դարավանդի վրա	<	2
2			ԲՆԱԿԱՏԵՂԻ	Ք.ա. 2-1 հազ., միջնադար	գյուղի ամ եզրին, ձորաբերանին	<	3

	2.1		Գերեզմանոց	միջնադար	մատուռի մոտ	S	3.2: Ենթակայությանը ներկայացված է 2 հուշարձան (3.2.1-3.2.2)
	2.2		Մատուռ		բնակատեղի տարածքում	<	3.1: Ենթակայությանը ներկայացված է 1 հուշարձան (3.1.1)
3			ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	15-19 դդ.	գյուղի ամ եզրին, Սբ. Մարիամ Աստվածածին հայկական եկեղեցու շուրջը	S	10.5
4			ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք.ա. 2 դ.	Հրազդան գետի ափին, խճուղու եզրին	<	4
5			ԵԿԵՂԵՑԻ	7 դ.	գյուղի ամ եզրին, Հրազդանի ձախ ափին	<	Եռախորան (5): Ենթակայությանը ներկայացված է 2 հուշարձան (5.1-5.2)
	5.1		Գերեզմանոց	13 - 17 դդ.	եկեղեցուց հվ և ատ	<	5.3: Ենթակայությանը ներկայացված է 3 հուշարձան (5.3.1-5.3.3)
6			ԵԿԵՂԵՑԻ	10 դ.	գյուղի ամ եզրին	<	վիմափոր (6)
7			ԵԿԵՂԵՑԻ	12 դ.	«Արզնի» առողջարանի թիվ 1 հանգստյան տան մոտ	<	վիմափոր (7)
8			ԵԿԵՂԵՑԻ	13 դ.	կամրջի մոտ	<	վիմափոր (8)
9			ԵԿԵՂԵՑԻ ՍԲ. ԿԻՐԱԿԻ	6 դ.	գյուղի մեջ	<	քառախորան (9)

10		ԵԿԵՂԵՑԻ ՍՔ. ՄԱՐԻԱՄ ԱՍՏԿԱԾԱԾԻՆ	17-19 դդ.	գյուղի ամ եզրին, Հրազդանի ձորի ափին, այգիների մեջ	S	հայկական (10): Ենթակայությանը ներկայացված է 4 հուշարձան (10.10.4)
	10.1	Գերեզմանոց	15-19 դդ.	Եկեղեցու շուրջը	S	10.5
11		ԿՈԹՈՂ	5-6 դդ.	գյուղի մեջ	<	12
12		ԿՈԹՈՂ	5-6 դդ.	գյուղի մեջ	<	13
13		ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱ- ՄԱՐՏՈՒՄ ԶՈՀԿԱԾՆԵՐԻՆ	1977 թ.	գյուղի մեջ	S	14
14		ՀՈՒՇԱՔԱՐ 1915 թ. ՄԵԾ ԵՂԵՈՆԻ ԶՈՀԵՐԻՆ	2002 թ.	Սբ. Մարիամ Աստվածա- ծին ասորական եկեղեցու մոտ	<	11.3
15		ՄԱՏՈՒՌ ՍՔ. ՊՈՂՈՍ - ՊԵՏՐՈՍ	13-14 դդ.	գյուղի ամ եզրին	<	15
16		ՔԱՐԱՅՐ - ԿԱՑԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ	քարի դար - միջնադար	գյուղից ներքև, Հրազդանի ձորի աջ ափին	<	16
17		ՔԱՐԱՅՐ - ՄԱՏՈՒՌ ՍՔ. ՍԱՐԳԻՍ	1431 թ.	գյուղի հս-ամ մասում, ձորալանջին	<	17: Ենթակայու- թյամբ ներկայաց- ված է 1 հուշարձան (17.1)

Սոցիալական Տնտեսական բնութագիր

ՀՀ Կոտայքի մարզը գտնվում է հանրապետության կենտրոնում: Այն հարավ-արևմուտքից սահմանակից է մայրաքաղաքին, արևմուտքից՝ ՀՀ Արագածոտնի, հյուսիսից՝ Լոռու, հյուսիսարևելքից՝ Տավուշի, արևելքից՝ Գեղարքունիքի և հարավից՝ Արարատի մարզերին: ՀՀ Կոտայքի մարզի տարածքով են հոսում Հրազդան և Ագատ

գետերը: Հրազդան գետը (նախկին անվանումը՝ Ջանգու) Արաքս գետի ձախ վտակներից է (երկարությունը՝ 141 կմ): Գետի համակարգում կա 340 վտակ, որոնցից 25-ն ունեն 10 կմ-ից ավելի երկարություն: Գետի խոշոր վտակներից են Մարմարիկը, Ծաղկաձորը, Արայի գետը, Գետառը: Կոտայքի մարզի մշտական բնակչության թվաքանակը 2020թ. հուլիսի 1-ի դրությամբ կազմել է 251200 մարդ, որը հանրապետության ողջ բնակչության 8.5%-ն է, որից 137000-ը քաղաքաբնակներ են (54.5%), 114200-ը՝ գյուղաբնակներ (45.5%):

2020թ. առաջին կիսամյակում մարզի արտադրական ձեռնարկությունների կողմից թողարկվել է 100.5 մլրդ. դրամի արդյունաբերական արտադրանք՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 81.6 մլրդ. դրամի դիմաց կամ ծավալներն աճել են 23.2%-ով: Այսպես, 2020թ. առաջին կիսամյակում մշակող արդյունաբերության արտադրանքի ծավալը կազմել է 74.3 մլրդ. դրամ, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավել է 16.5 մլրդ. դրամով կամ 28.5%-ով: Ընդ որում աճ գրանցվել է հիմնականում սննդամթերքի (4.3%), դեղագործական արտադրանքի (19.0%), հիմնային մետաղների (22.9%) արտադրության ճյուղերում: Հանքագործական արդյունաբերության ոլորտում արտադրվել է 1.4 մլրդ. դրամի արտադրանք՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի չափով: Էլեկտրաէներգիայի արտադրության ծավալներն աճել են 11.3 %-ով կամ արտադրվել է 23.6 մլրդ. դրամի էլեկտրաէներգիա:

Կոտայքի Մարզ



• Արգնի Տոհմային ԹՏԽ

Նկար 6; Կոտայքի մարզ

Հաշվետու ժամանակահատվածում մարզում արտադրվել է 5.3 հազ. տոննա միս, ինչը 39.5%-ով ավել է նախորդ տարվա առաջին կիսամյակում արտադրվածի համեմատ: Կաթի արտադրության ծավալն աճել է 0.8 %-ով կամ արտադրվել է 39.1 հազ. տոննա կաթ, իսկ ձվի արտադրության ծավալը կազմել է 102.6 մլն. հատ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշի համեմատ ավել է 37.5%-ով:

Արդյունաբերություն

Կոտայքի մարզի տնտեսության գերակա ճյուղերը երկուսն են՝ արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը: Համախառն ներքին արդյունքի ամենամեծ մասնաբաժինը բաժին է ընկնում արդյունաբերությանը: Վերջինիս արտադրական ծավալի ներուժը հիմնականում կենտրոնացված է քաղաքներում, ինչպես նաև մի շարք խոշոր գյուղական բնակավայրերում:

Արդյունաբերության ճյուղերից առաջատար են համարվում էներգետիկայի, մեքենաշինական և սննդի արդյունաբերության, քարամշակման, հանքարդյունահանման, ձկնաբուծության, շինանյութերի և փայտամշակման ոլորտները: Արդյունաբերության արտադրանքի մեծ մասը բավարարում է հայաստանյան շուկայի ներքին պահանջները, իսկ մի մասն էլ արտահանվում է արտասահման: Կոտայքի մարզի տարածքում գործում են 164 արդյունաբերական ձեռնարկություններ, որոնց ընդհանուր արտադրանքը կազմում է ամբողջ Հանրապետության արտադրանքի 13,4%-ը: Այս ցուցանիշով Կոտայքի մարզը երրորդն է Հայաստանում՝ մայրաքաղաք Երևանից և Սյունիքի մարզից հետո: Կոտայքի մարզի արդյունաբերության գլխավոր ճյուղերից մեկը սննդի արդյունաբերությունն է: Այս բնագավառի կարևոր ոլորտներն են կաթնամթերքի վերամշակումը, ինչպես նաև գինու և կոնյակի, պահածոների, ձվի և թռչնամսի, մսամթերքի արտադրությունը: Կոտայքում զարգացած է թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի (այդ թվում և ոսկու) վերամշակումը: Մարզում ամենաթույլ զարգացած ճյուղը թեթև արդյունաբերությունն է:

Արդյունաբերությունը տալիս է Հայաստանի ռադիոէլեկտրոնիկայի և սարքաշինության արտադրանքի մոտ մեկ հինգերորդ մասը, ապակու և բյուրեղապակու

40%-ից ավելին, ոչ ոգելից խմիչքների և հանքային ջրերի մոտ 12%-ը: Տնտեսության զարգացման հեռանկարները կապված էին մշակող արդյունաբերության աճի, հանքային հարստությունների շահագործման և մերձերևանյան գոտում գյուղատնտեսական արտադրանքի ավելացման հետ: Հայաստանի Կոտայքի մարզի տնտեսական ներուժին զգալի վնաս է հասցրել նախկինում տասնյակ հազարավոր աշխատատեղեր ապահովող խոշոր կազմակերպությունների քայքայումը՝ սեփականաշնորհման, հումքի, իրացման շուկաների նվազման կամ բացակայության և հիմնական միջոցների բարոյաֆիզիկական մաշվածության հետևանքով: Մարզի տասնյակ մեքենաշինական, թեթև և սննդի արդյունաբերական ձեռնարկություններ դադարեցրեցին իրենց գործունեությունը կամ էլ սկսեցին աշխատել փոքրածավալ հզորությամբ: Կոտայքի մարզի կայուն զարգացող ոլորտներից է էներգետիկ արդյունաբերությունը: Դրա երաշխիքներն են 17 հիդրոէլեկտրակայանների և «Հրազդան-5» էներգաբլոկի առկայությունը:

Գյուղատնտեսություն

Գյուղատնտեսությունը մարզի տնտեսության կարևոր ճյուղերից մեկն է: Հայաստանի այս մարզում գյուղատնտեսական արտադրությունը հիմնականում կազմակերպվում է գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների միջոցով: Բնորոշ է ինտենսիվ ապրանքային ճյուղերի զարգացումը: Մասնագիտացած է, որպես այգեգործական-անասնապահական շրջան՝ ծխախոտագործության ու բանջարաբուծության օջախներով: 2012թ.-ին Կոտայքի հողային ֆոնդը կազմել է 84283 հա, որից վարելահող՝ 14569 հա, խոտհարք՝ 3162 հա, արոտավայր՝ 26469 հա, խաղողի և պտղատու այլ այգիներ՝ 5059 հա, այլ (գյուղատնտեսության մեջ չօգտագործվող) հողեր՝ 27611 հա, անտառներ՝ 6479 հա: Երկրագործության նշանակությունը և տեսակարար կշիռը գյուղատնտեսության մեջ զգալիորեն աճ է գրանցել: Առաջատար ճյուղերից են ծխախոտագործությունը, որ տալիս է գյուղատնտեսության համախառն արտադրանքի 14%-ից ավելին, այգեգործությունը և պտղաբուծությունը՝ շուրջ

10%, բանջարաբուծությունը՝ մոտ 8%: Դաշտավարական աշխատանքների 80% մեքենայացված է:

Բարձրորակ սերմերի ու տնկանյութի արտադրության, պահպանման և օգտագործման համապատասխան համակարգի ձևավորման հիման վրա զարգացող սերմնաբուծությունը գյուղատնտեսության ոլորտներից մեկն է: Կլիմայական գոտիների առատությունը թույլ են տալիս մարզի բնակչությանը այստեղ աճեցնել զանազան պտուղ-բանջարեղեններ: Կոտայքի մարզում աճեցվում է եգիպտացորեն, ցորեն, գարի, արևածաղիկ, կարտոֆիլ, լոբի, վարունգ, լոլիկ, կաղամբ, սմբուկ, հատապտուղներ և զանազան մրգեր: Կոտայքի մարզի գյուղատնտեսության համար մեկ ոլորտն է անասնապահությունը: Կոտայքին բաժին է ընկնում ամբողջ հանրապետության անասնապահական մթերքների 7.6%-ը: Անասնաբուծության հիմնական ուղղությունը կաթնամթերքի և մսամթերքի արտադրությունն է: Մարզում գործում են անասնաբուծական մթերքների վերամշակման ավելի քան 13 մասնագիտացված ընկերություններ: Անասնապահության մյուս գերակա ճյուղերն են թռչնաբուծությունն ու մեղվաբուծությունը, որը զարգանում է մեծ թափով: 2014 թվականի տվյալներով Կոտայքի մարզի 620.6 հազ. թև թռչունները արտադրել են 117.3 միլիոն ձու, որը կազմել է հանրապետության ձվի արտադրության 19.1%-ը: 2014 թվականի տվյալներով մարզում առկա է 26046 մեղվաընտանիք: Կոտայքի բնակչիմայական պայմանները բարենպաստ են էկոլոգիապես մաքուր մեղր ստանալու համար: Կոտայքի ջրանցքի շնորհիվ արգավանդ հողերի խոշոր զանգվածները ոռոգելի են:

3. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության վերլուծություն

ԱՐԶՆՈՒ ՏՈՀՄԱՅԻՆ ԹՏԽ ԲԲԸ-ում պլանավորված տեխնիկական և տեխնոլոգիական վերազինման արդյունքում տեղադրելու են հավերի բուծման Hellmann

Poultry GmbH & Co ընկերության ժամանակակից վանդակային սարքավորումների հոսքագիծ: Այս տեխնոլոգիական վերազինման արդյունքում ՇՄ-ի վրա հնարավոր ազդեցության վերլուծությունը ըստ ՇՄ բաղադրիչների կլինեն:

Մթնոլորտայի օդի աղտոտում – ընկերությունը ունի վնասակար նյութերի համար սահմանված Սահմանային Թուլատրելի Արտանետումների թույլտվություն թիվ 008, տրված 15 փետրվար 2016թ:

Աղտոտող նյութ	Ընդհանուր արտանետում	
	գ/վ	տ/տ
Կախված մասնիկներ (կերի փոշի)	0.028	0.3
Ամոնիակ	1.351	40.72
Մեթան	1.389	38.4

Վերազինման արդյունքում թռչնի թվաքանակի փոփոխություն չի նախատեսվում, ուստի մթնոլորտային արտանետումների ավելացում չի պլանավորվում: Վերազինման աշխատանքները իրականացվելու են փակ թռչնանոցներում և մոնտաժային աշխատանքների ժամանակ հնարավոր արտանետումների ծավալները կլինեն աննշան կամ կբացակայեն:

Ջրային ռեսուրսների օգտագործում և պաշտպանություն – ընկերությունը ջրօգտագործման համար ունի խմելու ջրի մատակարարման պայմանագիր Վեոլիա Ջուր ՓԲԸ ընկերության հետ ինչպես նաև տեխնիկական ջրօգտագործման նպատակով շահագործում է մեկ խորքային հոր որի համար ունի Ջրօգտագործման թույլտվություն թիվ 0077, ուժի մեջ է 26.05.2020 մինչ 26.05.2023թ: Համաձայն գործող ՋԹ-ի ընկերության տրամադրված է 259,893 հազ մ³ /տարի ջրի օգտագործման թույլտվություն: Վերազինման արդյունքում ընկերությունը կունենա տեխնիկական ջրի օգտագործման ծավալների և ջրահեռացման ծավալների կրճատում: Համաձայն հոսքագծի տեխնիկա-

տեխնոլոգիական ցուցանիշների, այս վերազինման արդյունքում նախատեսվում է ջրի ծախսի կրճատումը 10-20% սահմաններում:

Հողային ռեսուրսների օգտագործում և պաշտպանություն – վերազինման ընթացքում նոր տարածքների ընդգրկում չի լինելու ուստի բացառվում են հողային ռեսուրսների օգտագործման կամ աղտոտման գործողություններ:

Բուսական և Կենդանական աշխարհի վրա ազդեցություն – վերազինման ընթացքում վայրի բնության վրա ազդեցությունը բացառվում է, գործողությունները իրականացվելու են ընկերության տարածքում՝ թռչնանոցում, որոնք փակ քարե շինություններ են:

Աղմուկ և վիբրացիա – աղմուկի և վիբրացիայի մակարդակները գտնվում են թույլատրելի սահմաններում, աղմուկի առավելագույն մակարդակը ընկերության արտաքին պարսպի շրջագծով կազմել է 30 դԲԱ: Համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի մարտի 06-ի N 138 հրամանով հաստատված «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N 2-III-11.3 սանիտարական նորմերի 5.3 կետով սահմանված աղյուսակ 3-ի պահանջների՝ Չայնի առավելագույն մակարդակները (Բնակարանների սենյակներ, հանգստյան տների, պանսիոնատների, ծերերի և հաշմանդամների տուն-ինտերնատներ, բնակելի տարածքներ, մանկապարտեզների և դպրոց-ինտերնատների, ննջասենյակներ) կազմում է 7⁰⁰ - 23⁰⁰ 55 դԲ իսկ 23⁰⁰ 7⁰⁰ 65 դԲԱ:

Պինդ թափոններ – ընկրությունը անձնագրավորել է Հավի թարմ ծերտ, դասիչ՝ 1310010103013, պինդ թափոնը, քանակությունը 2200 տոննա տարեկան: Վերազինման արդյունքում, նոր հոսքագիծը նախագծված է այնպես որ հավի ծերտը հոսքագծից դուրս է գալիս չոր վիճակով: Այս տեխնոլոգիական նորամուծության արդյունքում ունենալու ենք ծերտը որպես օրգանական պարարտանյութ երկրորդային օգտագործման հնարավորություն առանձ այլ հավելյալ մշակումների: Այս տեսակետից հոսքագիծը տալու է մեծ առավելություն, կրճատվելու է էլեկտրական էներգիայի օգտագործման

ծավալները և ծերտից օրգանական պարատանյութի ստացման ժամանակատար գործընթացը:

Էլեկտրոէներգիայի խնայողություն և Ջերմոցային զազերի արտանետումների կրճատում

Ընկերությունը արտադրական տարածքում տեղադրել է արևային ֆոտովոլտայի կայաններ, գումարային 600 կՎտ դրվածքային հզորությամբ: Կայանների շահագործման արդյունքում դեպի մթնոլորտ ածխաթթու գազի արտանետումների ծավալները, որպես ջերմոցային գազ, կկրճատվեն 7,790.61 տ-ով հաջորդող 20 տարիների ընթացքում, (ըստ տարիների տես աղյուսակ 1): Արևային ֆոտովոլտային կայանները հանարավորություն են տվել ընկերությանը կրճատել էլեկտրաէներգիայի գնման արժեքը:

Աղյուսակ 1

Տարի	Արտադրված Էներգիան կՎատժամ/տարի	Տոննա/տարի CO ²
2020	961,257.78	416.13
2021	957,293.83	414.41
2022	953,329.58	412.70
2023	949,365.93	410.98
2024	945,401.98	409.26
2025	937,474.08	405.83
2026	929,546.18	402.40
2027	921,618.28	398.97
2028	913,690.39	395.54
2029	905,762.48	392.10
2030	897,834.59	388.67
2031	889,906.68	385.24
2032	881,978.79	381.81
2033	874,050.89	378.38
2034	866,122.99	374.94
2035	858,195.09	371.51
2036	850,267.19	368.08
2037	842,339.29	364.65
2038	834,411.39	361.22
2039	826,483.49	357.78

Աշխատատեղերում սանիտարակենցաղային պայմաններ- ընկերությունում ներդրված է աշխատակիցների սանիտարական պայմանների ապահովման և հակահամաճարակային միջոցառումների կոմպլեքսային լուծումներ: Քանի որ ընկերությունը ունի կուտակված մեծ փորձ բռնաբուծության բնագավառում, այն իր մեջ ներառում է նաև հակահամաճարաբաբանական խիստ կանոնները: Բոլոր աշխատակիցների և այցելուների համար պարտադիր է կրել Անհատական Պաշտպանիչ Միջոցներ- մեկանգամյա օգտագործման արտահագուստ, բախիլներ, գլխաշորեր: Ընկերության տարածք տրանսպորտային միջոցների մուտքը իրականացվում է ախտահանման պրոցեդուրայից հետո: Տարածքները և թռչանոցները անցնում են պարբերական ախտահանիչ լվացման համաձայն ճյուղային նորմատիվների: Գործող արտադրական թռչանոցներում կողմնակի մարդկանց մուտքը սահմանափակված է: Աշխատանքային անձնակազմը անցնում է պարբերական բուժ զննում համաձայն Աշխատանքային օրենսգրքի 249 հոդվածի: Ընկերության տարածքում կահավորված են հանդերձարաններ, որտեղ աշխատակիցները ապահովված են առանձնացված հանդերձապահարաններով, լոդախցիկներով: Տեղամասերում տեղադրված են առաջին օգնության համար նախատեսված դեղատուփեր:

4. Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատում

Տնտեսական վնասը դա շրջակա միջավայրին հասցված վնասի վերացման համար անհրաժեշտ միջոցառումների արժեքն է, արտահայտած դրամական համարժեքով:

Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատումն իրականացվում է ըստ շրջակա միջավայրի բաղադրիչների:

Հնարավոր տնտեսական վնասը հաշվարկվում է՝

$$ՎՏ = ՀԱԳ + ՋԱԳ + ՕԱԳ,$$

որտեղ՝ ՎՏ-ն հնարավոր տնտեսական վնասն է դրամային արտահայտությամբ.

ՀԱԳ-ն հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով (բնական միջավայրի աղտոտում, բնական ռեսուրսների աղքատացում, էկոհամակարգերի քայքայմանը կամ վնասմանը հանգեցնող շրջակա միջավայրի բացասական փոփոխություններ) պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 92-Ն որոշման համաձայն. ԱՐԶՆՈՒ ՏՈՀՄԱՅԻՆ ԹՏԽ ԲԲԸ-ում պլանավորված տեխնիկական և տեխնոլոգիական վերազինման դեպքում այն մոտ կամ հավասար է զրոյի:

ԶԱԳ-ը ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության ուղղակի և անուղղակի ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 14-ի N 1110-Ն որոշման համաձայն. ԱՐԶՆՈՒ ՏՈՀՄԱՅԻՆ ԹՏԽ ԲԲԸ-ում պլանավորված տեխնիկական և տեխնոլոգիական վերազինման դեպքում այն մոտ կամ հավասար է զրոյի:

ՕԱԳ-ն մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 91-Ն որոշման համաձայն:

Ընկերության գործունեության արդյունքում հիմնական ազդեցությունը պայմանավորված է վնասակար նյութերի մթնոլորտային արտանետումներով:

Տնտեսական վնասի հաշվարկը կատարված է ըստ ՀՀ կառավարության 2005թ-ի հունվարի 25-ին ընդունած՝ «Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգ»-ի:

Յուրաքանչյուր արտանետման աղբյուրի համար տնտեսությանը հասցված վնասը գնահատվում է հետևյալ բանաձևով՝

$$U = \sum_{i=1}^n \Phi_i \cdot \Sigma \cdot \Psi_i \cdot \Phi_i \quad (1),$$

որտեղ՝

U-ն ազդեցությունն է, արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամերով,

Շգ-ն աղտոտող աղբյուրի շրջապատի (ակտիվ աղտոտման գոտու) բնութագիրն արտահայտող գործակիցն է, համաձայն նշված կարգի 9-րդ աղյուսակի՝ արդյունաբերական տարածքի համար ընդունվում է 4:

Վի-ն i-րդ նյութի (փոշու տեսակի) համեմատական վնասակարությունն արտահայտող մեծությունն է, համաձայն նշված կարգի 10-րդ և 11-րդ աղյուսակների՝

Կախված մասնիկներ, փոշի -10

ամոնիակ - 4.64

մեթան, որպես ցնդող ցածրամոլեկուլյար ածխաջրածին - 3.16

Քi-ն սվյալ (i-րդ) նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է,

Փգ-ն փոխադրման ցուցանիշն է, հաստատուն է և ընտրվում է՝ ելնելով

բնապահպանության գործընթացը խթանելու սկզբունքից:

Սույն կարգի համաձայն՝ $\Phi_g = 1000$ դրամ:

Քi գործակիցը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\Phi_i = q (3 SU_i - 2 U\theta U_i), SU_i > U\theta U_i \quad (2)$$

որտեղ՝

$U\theta U_i$ -ն i-րդ նյութի սահմանային թույլատրելի տարեկան արտանետման քանակն է՝ տոննաներով:

SU_i -ն i նյութի տարեկան փաստացի արտանետումներն են՝ տոննաներով,

Կախված մասնիկներ, փոշի - 0.3

ամոնիակ – 40.72

մեթան – 38.4

$$q = 1,$$

$$U = \sum \Phi_g \sum \Phi_i \Phi_i = 4 \times 1000 \times \{10 \times 0.3 + 4.64 \times 40.72 + 3.16 \times 38.4\} = 1,253,139 \text{ դրամ:}$$

Հնարավոր տնտեսական վնասը կլինի՝

$$\text{ՎՏ} = 0 + 0 + 1,253,139 = 1,253,139 \text{ AMD}$$

5. ՇՄ-ի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը

փուլ	ՇՄ –ի վրա ազդեցություն	Առաջարկվող մեղմացման միջոցառումները
Տեխնիկական և տեխնոլոգիական վերազինման փուլ	Փոշի և այլ մթնոլորտային արտանետումներ տեխնոլոգիական վերազինման և հոսքագծերի մոնտաժման ժամանակ	<ul style="list-style-type: none"> Թռչնանոցի հատակը խոնավեցնել մաքրման, քանդման, փոշի առաջացնող այլ գործողությունների ժամանակ Հնարավորության դեպքում անջատել պարապ ռեժիմում գտնվող մեքենաները և սարքավորումները Մշակել երթևեկության կառավարման պլան՝ աշխատողների և երթևեկության միջոցների սահուն տեղաշարժի հոսքը ու անվտանգությունը ապահովելու համար Բոլոր սարքավորումները և տեխնիկական միջոցները պետք է պարբերաբար ստուգվեն՝ համոզվելու համար, որ դրանք գործում են ՀՀ-ի իրավական պահանջների շրջանակներում
	Աղմուկ և վիբրացիա	Սահմանափակել աղմուկ և վիբրացիա առաջացնող տեխնիկական միջոցների օգտագործումը, սահմանել աշխատանքային գրաֆիկ 09:00-19:00
Արտադրական փուլ	Հոտի տարածումը թռչնանոցներից	<ul style="list-style-type: none"> Պարբերաբար ստուգել մաքրությունը և ապահովել թռչնի ծերտի հավաքման հոսքագծի անխափան աշխատանքը Պահպանել մաքուր և կոկիկ կայք, արագ մաքրելով թափվող թափոնները.
	Հոտի տարածումը թռչնի ծերտը տեղափոխող ավտոտրանսպորտային միջոցներից	Պարբերաբար լվանալ ծերտ տեղափոխող մեքենաների բեռնախցիկը
	Արտանետումներ`	<ul style="list-style-type: none"> Տարածքում չկայանել չշահագործվող տրանստորտային միջոցներ և տեխնիկա

	ներքին տրանսպորտային միջոցներ, ինչպես նաև տրանսպորտային միջոցներ, որոնք երթևեկում են դեպի դուրս	<ul style="list-style-type: none"> • Բոլոր տրանստորտային միջոցները և տեխնիկան պետք է գտնվեն սարքին վիճակում և տեխ վերասկողության անցնեն պարբերաբար • Օպտիմիզացնել թոշունների խոտանման գործընթացը • Պահպանել աերոբային պայմանները թոշանոցի օդային հոսանքներում՝ արտանետումները նվազագույնի հասցնելու համար ախտահանման աշխատանքների ժամանակ:
	Տեղում էներգիա արտադրող կայան	Դիտարկել վերականգնվող էներգիայի ստացման հնարավորությունները ֆերմայի տարածքում
	Զերմոցային գազերի արտանետումների կրճատում	<ul style="list-style-type: none"> • Էներգիայի ստացման և օգտագործման գույքագրում, անջատված ջերմության օգտագործում • Լուսավորության համակարգի բարելավում
	Աղմուկ և վիբրացիա	Բոլոր սարքավորումները պետք է ունենան աղմուկի թույլատրելի մակարդակ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունների և միջոցառումների ծրագիրը արտակարգ և վթարային իրավիճակների դեպքում

Թոշնաֆաբրիկայի շահագործման ժամանակ հնարավոր են վթարային իրավիճակներ, ինչպես նաև բնական աղետներ և անբարենպաստ օդերևութային պայմաններ: Բոլոր հնարավոր դեպքերում շրջակա միջավայրի լրացուցիչ աղտոտումը կանխելու կամ հնարավոր չափով նվազեցնելու համար մշակված է գործողությունների ծրագիր, որը ներառում է հետևյալ միջոցառումները.

- **Անբարենպաստ օդերևութաբանական պայմաններ.**

Օդերևութաբանական անբարենպաստ պայմանները դրանք օդային ավազանում ստեղծվող այնպիսի պայմաններ են, որոնք նպաստում են վնասակար նյութերի կուտակմանը մթնոլորտի գետնամերձ շերտում: Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ժամանակահատվածում (քամու արագության նվազման, անհողմության, մառախուղի առաջացման դեպքերում) ցրման գործընթացների դանդաղեցման

պատճառով հնարավոր են վնասակար նյութերի գետնամերձ կոնցենտրացիաների զգալի բարձրացումներ: Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների առկայությունը որոշվում է պատասխանատու աշխատողների կողմից՝ վիզուալ եղանակով: Վիզուալ եղանակով՝ օդերևութային պայմանները անբարենպաստ համարելու վերաբերյալ կայացրած որոշումը անհրաժեշտ է ստուգել մոտակա օդերևութաբանական կայան հարցումի միջոցով: Նշված որոշման դեպքում պատասխանատու անձանց կողմից անձնակազմը հրահանգավորվում և տեղեկացվում է անբարենպաստ օդերևութաբանական պայմանների հնարավոր առաջացման մասին: Ընդունված են անբարենպաստ օդերևութաբանական պայմանների 3 կատեգորիաներ:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագության նվազեցում, անհողմություն, մառախուղ) մասին հաղորդագրություն ստանալուց հետո կատարվում են հետևյալ գործողությունները (միջոցառումները).

- I կարգի վտանգի (զգուշացման) ժամանակ խստացվում է գործընթացների հսկողությունը,

- II կարգի վտանգի ժամանակ սահմանափակվում է գործունեության շրջանակը,

- III կարգի վտանգի ժամանակ դադարեցվում է գործընթացը:

• **Հրդեհային անվտանգություն**

ա) թռչնաֆաբրիկայում գտնվող հրդեհավտանգ հանգույցները պետք է համալրված լինեն հակահրդեհային ավտոմատ սարքով, որը վերահսկում է դրա տարածքում հրդեհի յուրաքանչյուր բռնկում,

բ) բոլոր այն էլեկտրական սարքավորումները, որոնք չունեն ավտոմատ սարքեր, ապահովված կլինեն ձեռքի կրակմարիչներով,

գ) հրդեհային անվտանգության համար պատասխանատու անձը ամբողջ տարածքում անց է կացնում տեսչական ստուգում՝ որպես օրվա աշխատանքային պլանի մի մաս,

դ) հրդեհի ժամանակ կիսանքազրկվեն բոլոր էլեկտրական սարքերը, կմիացվի հակահրդեհային ջրի համակարգը, անձնակազմը կտեղափոխվի անվտանգ վայր:

Արտակարգ և վթարային իրավիճակների, ինչպես նաև տեխնոլոգիական վթարների ժամանակ համալիրի (օբյեկտի) գործունեությունը դադարեցվում է, հոսանքազրկվում են բոլոր էլեկտրական սարքերը, անձնակազմը շտապ տեղափոխվում է անվտանգ վայր:

Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը շինարարական աշխատանքների ընթացքում

Նախքան շինարարական աշխատանքների մեկնարկը, շինարարության կապալառուն (ները) պետք է կիրարկի Արտակարգ իրավիճակների պատրաստվածության և արձագանքման պլանը՝ շինարարական ողջ ժամանակահատվածի համար:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

• Մինչ աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում՝ ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:

• Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հազեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործման, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:

• Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին

բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

Ըստ նախնական գնահատման, ապահովելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

Հակահրդեհային անվտանգության միջոցառումներ

1. Անհրաժեշտ է հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման համար տարածքում ունենալ ջրային ռեսուրսների մշտական հասանելիություն և նախատեսել տարածքում հրշեջ հիդրանտի տեղադրում:

2. Շինարարական աշխատանքների ժամանակ՝

ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ և ՀՂՈՒՄՆԵՐ

1. ՀՀ Շրջակա միջավայրի պաշտոնական կայք:
2. Հայաստանի ազգային ատլաս, հ. Ա, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2006:
3. «ՀՀ բնակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները» ուղեցույց – ձեռնարկ:
4. «Հայաստանի թռչուններ» Մարտին Ս. Ադամյան, Դանիել Քլեմ Կրտսեր, Երևան 2000թ.:
5. «Հայաստանի բնաշխարհ» խմբագր.հանձնաժողով.Հ. Մ. Այվազյան գլխ. խմբագիր և ուրիշ., Երևան 2006թ.:
6. Հայաստանի բույսերի Կարմիր Գիրք.– 2010թ.:
7. Հայաստանի կենդանիների Կարմիր Գիրք.– 2010թ.:
8. Կոտայքի մարզի մարզպետարանի պաշտոնական կայք:
9. Արզնի համայնքի համայնքապետարանի պաշտոնական կայք: